ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության նախարարությունը նախաձեռնել է նպատակային կլինիկական օրդինատուրայի գործընթացի բարեփոխումներ: Մասնավորապես նախատեսվում է, որ այս տարվանից կլինիկական օրդինատուրա ընդունվող բժիշկ-մասնագետներն ավարտելուց հետո մարզային բժշկական կազմակերպություններում մասնագիտական գործունեություն կիրականացնեն 3 տարի՝ նախկին 5 տարվա փոխարեն:

Նշանակումներ կատարելիս՝ նախարարությունը հաշվի կառնի գործուղվող բժիշկ-մասնագետի նախապատվությունը, ինչպես նաև նրանց կաջակցի մարզերում կացության հարցում, որի ուղղությամբ կատարվում են սոցիալական աջակցության մեխանիզմների մշակման աշխատանքներ:

Նշենք, որ ուսումնառության ընթացքում կլինիկական օրդինատորները ստանում են կրթաթոշակ՝ նվազագույն աշխատավարձի չափով:

Ցանկացողները գրանցման և մանրամասներին ծանոթանալու համար կարող են դիմել առողջապահության նախարարություն (Կառավարական տուն N 3), անձնակազմի կառավարման վարչություն, 211 սենյակ, հեռ. 060-80-80-03/1505, 1504, էլ.հասցե: david.hovsepyan@moh.am:

Մասնագիտությունների ցանկը ներկայացվում է ստորև:

Ցանկ

2020-2021թթ ուսումնական տարվա նպատակային կլինիկական օրդինատուրայի մասնագիտությունների

1. Լաբորատոր ախտորոշում
2. Ընդհանուր վիրաբուժություն
3. Անեսթեզիոլոգիա-ռեանիմատոլոգիա
4. Ակնաբանություն
5. Մանկաբարձություն և գինեկոլոգիա
6. Քիթ-կոկորդ-ականջաբանություն
7. Նյարդաբանություն
8. Ընտանեկան բժշկություն
9. Հոգեբուժություն
10. Մանկական հոգեբուժություն
11. Մանկաբուժություն
12. Նեոնատոլոգիա
13. Ներքին հիվանդություններ
14. Վարակիչ հիվանդություններ
15. Վնասվածքաբանություն և օրթոպեդիա
16. Ճառագայթային ախտորոշում
17. Սրտաբանություն
18. Ներզատաբանություն (էնդոկրինոլոգիա)
19. Շտապ և անհետաձգելի բժշկություն
20. Մանկական անէսթեզիոլոգիա-ռեանիմատոլոգիա
21. Համաճարակաբանություն
22. Դատաբժշկական փորձաքննություն